

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

2.

Ազգութիւն եւ ազգային խնդիր.

Սիրելի Սուրէն,

Քո նամակներից մէկում դու շօշափել էիր ազգային խնդիրը և շատ դառնացած էիր այն կեղծ ազգասիրութեան դէմ, որ քեզ հանդիպել էր վերջին ժամանակներս թէ քո ընկերակիցների և թէ օտարազգի ծանօթներիդ շրջանում: Սակայն նամակիցդ կարելի էր եզրակացնել, որ դու, կարծես թէ ազգայնական խնդրին շատ երկրորդական տեղ ես տալիս և դովարանում ես համամարդկային գաղափարը աւանց ազգերի և կրօնի խտրութեան:

Համակարծիք լինելով քեզ, որ մարդ չպէտք է շովինիստ լինի, համաձայն չեմ, որ անհատը պատկանելով որ և է ազգութեան, պէտք է անտես անի իւր ազգի շահերը և տարուի համամարդկային գաղափարներով, որից մեծապէս կարող են օգտուել օտարները այդպիսուն զէնք ծառայեցնելով իրենց ազգային շահերին ի ֆրաս նորա ազգութեան. այս պատճառով այսօր կամենում եմ քեզ գրել մի տեսութիւն ազգութեան և ազգային խնդրի մասին:

Ինձ այնպէս է թւում, որ դու եթէ ըստ էութեան լաւ ըմբռնես այդ հարցերը, քո գաստիարակչական դործում քեզ հաւատացած մանուկների մէջ կարող կլինես առողջ սերմեր սերմանել և նոցանից պատրաստել ոչ թէ շովինիստներ, այլ իսկական ազգասէրներ, որ ոչ թէ ժխտում, անտես է անում համամարդկային շահերն ու գաղափարները, այլ դալիս լրացնում է այն, և հէնց նորա հիմնաքարն էլ կազմում է:

Ազգութեան և ազգային խնդիրը նոր չէ, այլ այդ երևոյթը գոյութիւն ունի շատ հին ժամանակներից, ի հարկէ, սաղմային դրութեան մէջ, սակայն ազգութեան գաղափարի զարգացումը, որ հնումը եղել է բացառիկ երևոյթ, վերջին դարերում դարձել է բնական և միամամանակ ազգային խնդիրը մեծ նշանակութիւն է ստացել նւրոպայի քաղաքական կեանքում:

Վերջին ժամանակների ուսումնասիրողները, որոնք փորձել են պարզարանել ազգային գաղափարի էությունը, նորա հիմքերը գտել են մարդկանց անհատական գիտակցութեան շրջանում. ահա օրինակ՝ թէ ինչպէս է բացատրում շեխ գիանական Յելլինեկը ազգութեան գաղափարը:

«Ազգութիւնը առարկայական, արտաքինապէս գոյութիւն ունեցող մի բան չէ: Նա, ընդհակառակը, վերաբերում է ընդարձակ գոտակարգի հասարակական երևոյթներին, որոնք առհասարակ չեն կարող չափուել արտաքին չափերով: Ազգութիւնն է ինչ որ էապէս անհատական աշխնքն գիտակցութեան որոշ բովանդակութեան յատկութիւն: Խումբ մարդիկ, որոնք ընդունում են իրենց միացած ընդհանուր իւրատեսակ կուլտուրական տարրերի բազմութեամբ և ընդհանուր պատմական անցեալով, կազմում են ազգութիւնս:»

Ի հարկէ մարդկանց այս տեսակի գիտակցութեան բովանդակութիւնը ծնունդ է առնում հասարակական կեանքի առարկայապէս հաստատուած յայտնի պայմաններում, նա արտայայտւում է նոյնպէս հասարակական ստեղծագործութեան առարկայապէս հաստատուած արդիւնքի մէջ, բայց ազգային գիտակցութեան ծննդեան պայմանները տարրեր են, ինչպէս և նորա հետեանքները: Այդ պատճառով ազգութեան անհրաժեշտ առարկայական երևոյթների որոշման բոլոր փորձերը նպատակի չեն հասցնում. այդպիսի նշաններ գտնելը շատ դժուար է: Բայց և այնպէս կանոց առնենք մի քանի երևոյթների վերայ, որոնք ամենից շատ են մատնանշուում:

Յեզի մարդարանական միութիւնը, իբրև ազգայնութեան նշան, ամենաքիչ նշանակութիւնն ունի և քչերն են դորա կողմնակից: Մեր ժամանակակից բոլոր ազգութիւնները կազմուել են մարդարանական գանազան տարրերից. այսպէս Ռուս ժողովուրդը բաղկացել է ոչ միմիայն սլաւեաններից, այլ նորա կազմի մէջ մտել են բազմաթիւ ֆիննական և թուրք-թաթարական տարրեր: Գերմանացիները բաղկացել են գերմանական, կելտական և սլաւեանական տարրերից: Թաալացիների, հայերի ցեղային կազմութիւնն աւելի բարդ է: Աւրոպական ժողովրդի մէջ, որին ընդունուած է համարել մաքուր ըստ արեան, հանդիպում են շատ տարրեր մարդարանական տիպեր: Ժամանակակից ազգութիւնների մէջ ոչ միայն խառնուած են շատ տարրեր մարդարանական տիպեր, այլ շատ յանախ տարածութեամբ բաժանուած միևնոյն ազգութեան տարրեր մասերը էապէս տարրերում են իրարից ցեղային տեսակէտով, ինչպէս օրինակ հիւսիսային և հարաւային գերմանացիները:

Իբրև արտաքին նշան ազգութեան կազմակերպութեան հա-

մար կարելի է ընդունել անհրաժեշտ առարկայական պայման ընդհանուր երկիրը: Ժամանակակից բալոր ազգութիւնները կազմակերպուել են որոշ երկրի մէջ: Բայց երբ մի անգամ ազգութիւնը կազմուեց, այն ժամանակ նորա երկրի հետ ունեցած կապի նշանակութիւնը նսեմանում է: Ազգութեան մասերը կարող են դարերով ապրել իրենց նախկին երկրի սահմաններից դուրս, ուրիշ ցեղերի և ազգութիւնների մէջ չկորցնելով իրենց անհատականութիւնը, ինչպէս գերմանացիները Ռուսաստանում և Աւստրո-Վենգրիայի արևելեան մասում: Հայերս, որ շափազանց ցրիւ ենք եկած Հնդկաստանում, Պարսկաստանում, Ռուսաստանում, Տանկաստանում, Աւրոպայում, Ամերիկայում և այլն, պահպանել ենք մեր ազգային առանձնայատկութիւնները: Բայց կան և ազգեր, ինչպէս օրինակ հրէաները, որոնք թէև կորցրել են իրենց հայրենի երկրի հետ կապը, բայց չեն կորցրել ազգութեան առանձնայատկութիւնները:

Ձի կարելի թիտել պետութեան նշանակութիւնը, որպէս կազմակերպուող ազգի գործոն-Ֆակտոր: Պետութիւնը խոշոր գեր է կատարել արևմտա-Աւրոպական կազմակերպութիւնների խնդրում երբեմն նոյն իսկ բաւական տարրեր ցեղային տարրերից:

Բայց և այնպէս ազգութեան և պետութեան միջև անհրաժեշտ կապը գոյութիւն չունի: Որոշակի արտայայտուած հին հելլենական ազգը երբէք միաւորուած չի եղել ամբողջական քաղաքական կազմակերպութեան մէջ: Իտալական և գերմանական ազգութիւնները իրանց միաւորութիւնից շատ առաջ էլ գոյութիւն ունէին: Իսկ հայերս կորցնելով մի քանի անգամ մեր քաղաքական անկախութիւնը, չկորցրինք մեր ազգային ոգին: Աւ փիլիսոփա Յիխտէն գիտում է ոգևորուած ճառերով գերմանական ազգին (Reden an die deutsche Nation) հէնց այն բողէին, երբ քաղաքականապէս այս ազգը աւելի բաժան բաժան էր եղած, երբ անհետացել էր գերմանացիների միութեան վերջին ստուերը հին գերմանական կայսրութեան ոչնչացումով, ասում է Բրուցկուար:

Կրօնի միասեռակութիւնը խոշոր նշանակութիւն ունի ազգերի կազմակերպութեան համար, որովհետև կրօնական ձեւակերպութիւնները կուշտուրական դարգացման յայտնի շրջանում կազմում են մասսայի հոգևոր կեանքի գլխաւոր բովանդակութիւնը: Հազիւ թէ հնարաւոր լինէր հրէաներին և հայերին պահպանել իրենց ազգութիւնը եթէ նոքա կրօնական տեսակէտով խիստ շտաբերուէին շրջապատող ազգութիւններից: Կրօնական կապը թուլացած կամ անհետացած երկրային և պետական կապի փոխարէն պահպանել է այս ազգութիւններին հազարաւոր տարիներ: Կրօնի տարրերութիւնը, որ միանգամ ստեղծուել է, յաճախ ուժեղ արգելք է հանդիսանում միասեռակ տարրերի ի մի ազգութիւն

ձուլուելուն: Սակայն, քաղաքակրթութեան զարգացմամբ հողերը
 կեանքը հարստանում է նոր բովանդակութեամբ և կրօնների նշանակու-
 թիւնը ժամանակակից ազգութիւնների կազմակերպութեան
 մէջ աւելի համեստ տեղ է բռնում:

Ազգութեան բոլոր առարկայական նշաններից անկասկած
 ամենամեծ նշանակութիւնն ունի լեզուն: Դա հետևում է հէնց
 ազգութեան որոշումից, իբրև մի խումբ, որ միացած է որոշ հոգեկան
 բովանդակութեամբ: Լեզուն ներկայանում է մարդկանց
 իրար մէջ յարաբերութեան հիմնական զէնքը, լեզուների տարբե-
 րութիւնը մասսայի իրար մէջ ունեցած յարաբերութեան սահ-
 մաններն է որոշում: Այդ պատճառով վիճակագրողները ազգու-
 թեան առարկայական նշաններ փնտռելում սովորաբար կանգ են
 առնում մայրենի լեզուի վերայ: Բայց լեզուի վերաբերութեամբ
 էլ, իբրև ազգութեան անհրաժեշտ նշան, պէտք է վերապահութեամբ
 նայել: Ամեն մի ազգութիւն սովորաբար բաղկանում է մասսա-
 ներից, որոնք խօսում են առանձին բարբառներով, ճիշդ է, այն-
 քան իրար նման, որ կարելի է փոխադարձաբար միմեանց հաս-
 կանալ ուրեմն և փոխադարձ յարաբերութիւնը հնարաւոր է, այս
 բարբառներից մէկը սովորաբար մշակում է իբրև ազգային լեզու,
 լեզու գրականութեան և համայնական հաստատութիւնների: Հրէա-
 ների մէջ, մինչև նոցա ցրիւ դալը, ազգային լեզուի դերը խաղում
 էր բացառապէս հին-հրէական լեզուն, որ շատ քիչ առնչութիւն ունի
 ցրուած հրէաների բարբառների հետ, բայց որի հետ կապում է
 նոցա պատմական աւանդութիւնը և կրօնական սովորութիւնը:
 Նոյնն է և միւս ազգութիւնների մէջ: Սլաւոնական ցեղի մէջ նախ
 հին սլաւոններէն է եղել գրական լեզուն, ապա վելիկորուաների
 բարբառից առաջացել է արդի սուսական գրական լեզուն: Հայերի-
 մէջ նախ հին գրաբարը, և այժմ արարատեան բարբառն է որոշ
 մշակումից յետոյ գարձել մեր գրական լեզուն:

Բոլոր վերոյիշեալ առարկութիւններով հանդերձ անհրաժեշտ
 է լեզուն համարել իբրև ամենակարևոր զէնքը մարդկանց հողեր
 յարաբերութեան և նոցա իրարից բաժանելու համար, նոյնպէս և
 ազգայնութեան կարևորագոյն նշան:

Ազգայնութիւնն է հողեր յարաբերութիւն: Մարդիկ անդամ
 են դառնում այս կամ այն ազգութեան իրենց կրթութեամբ:
 Ռուս շրջանում դաստիարակուած գերմանացին իրեն կզգայ ռուս
 և ոչ գերմանացի: Հաւատալիքի, պատմական աւանդութիւնների,
 բարոյական որոշումների միատեսակութիւնը, միևնոյն գրականու-
 թեան վերայ կրթութիւնը ստեղծում են մարդկանց մէջ փոխա-
 դարձ կապի գիտակցութիւն. իւրաքանչիւրը զգում է իրեն մի
 մասնիկ հողեր միաւորի, ազգութեան, որ ապրում է յաւիտեան,

չնայելով սերունդների փոփոխութեան: Ստացածի միասեռականութիւնը անդրադառնում է կամքի ուղղութեան վերայ, ստեղծում է ընդհանուր ազգային բնաւորութիւն: Ազգային բնաւորութեան այս մշակոյթի մէջ չի կարելի հերքել նաև ժառանգականութեան նշանակութիւնը: Այն հանգամանքը, որ ամեն մի յաջորդ սերունդ իւր ամբողջութեամբ ներկայանում է ոչ միայն հողեր, այլ և ֆիզիքական ժառանգ անցեալի, ստեղծում է մարդկանց ազգային կուլտուրայի և ֆիզիքական բնութեան մէջ որոշ ներդաշնակութիւն: Այսպիսով գերմանացին արիւնով կարող է մեծանալ իբրև սուս, բայց սուսական բնաւորութեան ազգային առանձնայատկութիւնները նորա մէջ բաւականաչափ արտայայտուած չեն լինիլ:

Ազգային կուլտուրայի բովանդակութիւնը, գորա հետ և ազգային բնաւորութիւնը անփոփոխելի մի առեւալ չէ, ինչպէս յաճախ պնդում են ազգայնականները. պէտք է որ այդ բովանդակութիւնը աստիճանաբար փոփոխուի, ազգային կուլտուրան պէտք է աստիճանաբար բարդաւանի: Այս էլ պիտի նկատել, որ ազգային կուլտուրան երբէք չի ներկայանում որպէս բացառապէս որոշ ազգի ստեղծագործութեան արդասիր: Նոյն իսկ ամենահին ազգային կուլտուրաները, չնայելով միջազգային յարաբերութեանց համեմատական թոյլ զարգացման, կրել են ամենաբարդ ազդեցութիւններ: Հելլենական ազգային կուլտուրան կազմուել է Փրինիկական և Եգիպտական ազդեցութեան տակ, Հռոմէական կուլտուրան Հելլենականի ազդեցութեան տակ: Այն, ինչ որ պաւսանասէրերը ժամանակակից սուսական կուլտուրայի մէջ համարում են գուտ սուսական, մեծ մասամբ փոխ է առնուած Բիւզանդիայից: Եւրոպայի ժամանակակից իւրաքանչիւր ժողովրդի ազգային կուլտուրայում պարունակուում են մարդկային մտքի ամենաթանկագին ստեղծագործութիւնները, որ ձեռք են բերուել Եւրոպայի և առաջաւոր Ասիայի թէ անհետացած և թէ այժմ գոյութիւն ունեցող բոլոր ազգերի հազարաւոր տարիների աշխատանքով:

Համամարդկային կուլտուրայի իւրացման գործողութեան մէջ ձեւաւորում են ժամանակակից ազգային կուլտուրաները: Բայց ստար կուլտուրայի տարրերի իւրացումը արտայայտուում է գուտ կրաւորական գործողութեամբ: Օտար կուլտուրան կանոնաւոր մեքենայօրէն չի դարսում սեպհական կուլտուրայի սաղմի վերայ և նորան չի մեկուսացնում: Նա միաւորում է սեպհական կուլտուրայի սաղմի հետ և յարմարում է որոշ ժողովրդի կեանքի պայմանների, նորա պահանջների և նորա արդէն մասնաւորապէս դասաւորուած բնաւորութեան հետ: Կուլտուրայի համամարդկային տարրերը իւրաքանչիւր ազգութեան մէջ ընդունում են իւրատեսակ գոյն, իւրատեսակ վերամշակում, նորա հարստանում են նոր

տարրերով, որոնք մշակուած են որոշ ազգութեան մէջ, հէնց գորա-
նում էլ արտայայտում է մարդկային ստեղծագործութիւնը:

Բայց ազգայնութիւնը ազգային կուլտուրայի անընդհատ
գործադրութեան հետեանքով չէ առաջագիմում միայն, այլ փոխ-
վում է և նորան կրողը: Տարրեր գարաշրջաններում, ազգարնա-
կութեան տարրեր խաւերը կարող են լինել բացառապէս ազգային
կուլտուրայի կրողները:

Ազգայնութեան նախնական նմանողութիւնը ցեղն է: Վեր-
ջինս բնորոշում է արեւնական ազգակցութեամբ և փոքր տարա-
ծութեան վերայ համակցութեամբ. լեզուի և հոգևոր կուլտուրայի
նմանողութիւնը ստեղծում է համերաշխութեան գիտակցութիւն:
Բայց փոխադարձ յարաբերութեան թուլութեան ժամանակ ցեղի
ամեն մի տարածութեան մէջ արտագաղթը առաջացնում է լե-
զուների բաժանումն. փոխադարձ կապերը թուլանում են: Յեղի
կուլտուրայի ազգատութիւնը այդ կուլտուրային դարձնում է ոչ
կայուն. ցեղերը արտաքին ազգակցութեան տակ կարող են արագ
փոխել իրենց լեզուն և իրենց հաւատալիքները: Ազգութիւնները,
ներկայ իմաստով, որոնց կազմի մէջ մտնում են մարդկանց ահա-
գին բազմութիւն, բնակուած ահագին տարածութեան վերայ,
սկզբնաւորում են միայն այն ժամանակից, երբ սկսում է ազ-
գարնակութեան դասակարգային տարրերութիւնը, երբ սկսում է
գարգանայ պետութիւնը: Տիրող դասակարգը իւրացնում է այն
հանգիստը և այն ստորեայ կեանքի հոգսերից ազատութիւնը,
որոնք անհրաժեշտ են որ ընդունի համամարդկային այն արատ-
գրութիւնները, որոնք որոշ պատմական շրջանում և յարաբերու-
թեան որոշ պայմաններում կարելի է ձեռք բերել: Այնքան, որքան
զա ձեռնտու է բարձր դասակարգերին և անհրաժեշտ պետութեան
համար, միջոցներ են ձեռք առնում, որ կուլտուրական ստեղծա-
գործութիւնները դառնան մասսայի սեպհականութիւն: Այդ ձևով,
ամենից առաջ ժամանակակից շրջանի գեռ արշայոյսին նախնա-
կան հաւատալիքները փոխարինուելին համաշխարհային-պատմա-
կան կրօններով: Բարձր դասակարգերի բարձր կուլտուրայի ար-
տագրութիւնների տյս ներմուծումը ազգարնակութեան մասսա-
ների մէջ ընդգիմագրում է տարածութեամբ բաժանուած ցեղերի
իրրև ազգութիւն կազմակերպումն: Այս գործողութեան արագու-
թիւնը կախում է աշխատանքի արտագրութեան շափից, հաստ-
րակութեան համայնացման աստիճանից, բարձր դասակարգերի և
ժողովրդական մասսաների լեզուի միատեսակութեան աստիճա-
նից: Որքան աւելի մասսաները մասնակցում են բարձր դասակար-
գերի կուլտուրական ստեղծագործութեանց մէջ, այնքան ընդար-
ձակ է ազգային կուլտուրայի հիմքը, այնքան նա ամուր է: Հին

քաղաքակրթութեան անկումն հնարաւոր էր շնորհիւ այն բանի, որ դա էր սարկատիրական դասակարգի կուլտուրա, որ խորը չէր թափանցել իբրև նիւթ նոր ազգութիւնների կազմակերպութեան համար:

Արեւմտեան եւրոպայի ներկայ դարաշրջանի համար բնորոշ է ազգային կուլտուրայի խորը թափանցումը մասսայի մէջ: Բայց միշտ այդպէս չէ եղել: Միջին դարերում ներկայ քաղաքակրթութեան ծննդեան ժամանակ ազգային կուլտուրայի կրողներն էին միայն ֆեոդալները և ասպետները: Միջնադարեան երգիչների—միննեզեն-գերների երգերի, պրովանսալեան բոմանսների մէջ ստեղծուել են ազգային գրականութեան սաղմերը: Միւս բարձր դասակարգի—հոգևորականութեան կուլտուրան ազգային բնաւորութիւն չէր կրում: Միջին դարերի վերջում անող հասարակական դասակարգութեանց հետ միասին ծնունդ է առնում խոշոր բուրժուազիան, բիւրօկրատիան և ազատ արուեստի մարդկանց դասակարգը, որոնք մասնակցում են ազգային կեանքի, ազգային կուլտուրայի ստեղծագործութեանը: Միայն վերջին դարերում, համեմատ ժողովրդական դպրոցների տարածման, ժողովրդի աւելի լայն դասակարգերը սկսում են օգտուել ազգային կուլտուրայի բարիքներից: Գիւղացիութիւնը, կղզիացած ապրելով միւս դասակարգերից աւելի երկար է պահպանում իւր ցեղային առանձնայատկութիւնները, միւսներից աւելի ուշ է տիրում ազգային լեզուին և նորա մէջ դանդաղ է թափանցում ազգային կուլտուրան: Տարբեր երկրներում տարբեր աստիճանով է թափանցում ազգային կուլտուրան մասսաների մէջ, սոքա տարբեր աստիճանով ազգային են: Յեղային նիւթից ազգայնութեան ձևաւորման գործողութիւնը նախկին դարերում կատարուել է շատ դանդաղ—դարերով, դորա համար չի եղել ամենահզօր ժամանակակից գործօնը—ժողովրդական դպրոցը: Ներկայումս, շնորհիւ դորա կատարում է աւելի արագ:

Որովհետև ազգային կուլտուրայի կրողները երկար ժամանակ եղել են միմիայն սակաւաթիւ բարձր դասակարգերը, որոնք յենուած են եղել պետութեան վերայ, ապա հասկանալի է, որ պետութեան և սորա հետ կապուած բարձր դասակարգերի բաղդը անագին նշանակութիւն ունի ազգային կուլտուրայի զարգացման համար: Անընդհատ պատմական աղետները կանգնեցնում են ազգային կուլտուրայի զարգացումը այն ազգարնակութեան, որ սկսել էր ձևակերպուել իբրև ազգութիւն և իջեցնում է նորան ժողովրդականի աստիճանին կամ ցեղերի ժողովին: Ազգայնութիւնը նոյն իսկ կարող է ընդմիշտ խորատակուել և մնացած ցեղային նիւթը կարող է ծառայել նոր ազգութիւններ ստեղծելու

համար, բայց բարեյաջող պայմաններում կարող է նորից վերածնունդի:

Ազգային կուլտուրայի զարգացման մէջ ընդհատումն առաջ է գալիս տիրապետութիւնների հետեանքով, նոյնպէս և երբ բարձր գասակարգերը ուրիշ աւելի կուլտուրական ազգութեան հետ են ձուլուած: Այդպիսի ձուլումը կարող է ընդհատել կուլտուրական կապերի խզումն վերին և ստորին գասակարգերի մէջ և կանգնեցնել ազգայնութեան ձևակերպումը:

Պատմութիւնը ազգայնութեան ձևակերպումների կանգնելու շատ օրինակներ է տալիս:

Տասն և վեցերորդ դարում կանգ է առնում ուկրայինեան և լիտովեան ժողովուրդների ազգային զարգացումը, շնորհիւ իշխող գասակարգերի լեհերի հետ ձուլուելուն:

Չեխերը, որ տասնևվեցերորդ դարում արդէն կազմակերպուած շատ բարձր կուլտուրայով ազգութիւն էին կազմում, երեսնամեայ պատերազմի ժամանակ Սպիտակ լեռան մօտի նահատամարտից յետոյ ոչնչացան, ամբողջ չեխական ֆէօդալական արիստոկրատիան և բոլոր բուրժուազիան ստիպուեցաւ հեռանալ և այս երկու գասակարգերը փոխարինուեցին գերմանացիներով: Գորա հետ միասին չեխական ազգայնութիւնը երկար ժամանակ իջնում է պատմութեան ասպարէզից, դեռ տասնևութերորդ դարում նա համարում էր վերջնականապէս մեռած, ապագայ չունեցող ազգ, ինչպէս գերմանացիներն են ասում eine geschichtslose Nation (մի պատմութիւնից զուրկ ազգ):

Ազգայնութեան ձևակերպման շափազանց արագ թափ նկատուում է տասնևութերորդ դարում: Գորա հետ ազգային զարգացման բնաւորութեան ուղղութիւնն էլ փոխւում է: Նախկին դարերում, պէտք է նկատել, որ թէև դանդաղ, բայց միանգամայն որոշ առաջաւոր ազգերը կլանում են այն ցեղերին, որոնք գեռ իրրև ազգութիւն չէին կազմակերպուել: Ռուսները տարածուելով հիւսիս և արևելք ձուլում են իրենց մէջ շատ ֆիննական և թուրք-թաթարական ցեղեր: Գերմանացիները դէպի արևելք իրենց շարժումով աստիճանաբար ձուլում են մերձէլրեան սլաւոնների, լեհերի և պրուսսականների ահադին մասսաներ:

Մինչդեռ տասնևիններորդ դարից սկսած մենք նկատում ենք ուրիշ հոսանք: Կենդանութեան նշաններ են ցոյց տալիս պատմական դժբաղդութիւններից կաղմալուծուած ազգութիւնները: Ժողովուրդները ընդդիմութիւն են ցոյց տալիս հարկազրական ձուլման դէմ նոյնիսկ այն ժամանակ, երբ վերջինս մօտեցնում է նոցա բարձր զարգացած և հզօր ազգութիւնների կուլտուրային: Աւստրիայում կենդանանում են չեխերը, սլովին-

ները, բուսիճները յամառ կերպով հրաժարում են կուլտուրայէս
բարձր կանգնած գերմանացիների և լեհերի հետ ձուլուելուց,
լատիշներն ու հասոճները սկսում են կազմակերպուել իրրե
անկախ ազգութիւններ: Արեւմտեան ֆիճները մի գարի բնթաց-
քում կազմակերպեցին շվեդներից անկախ ազգութիւն հարուստ
կուլտուրայով:

Ինչի՛ արդիւնքն է ազգութիւնների գարգացման մէջ այս
նոր ուղղութիւնը, որ ենթարկում է բազմատեսակ գնահատում-
ների: Այս նոր ուղղութիւնն անպայման արդիւնք է դէմակրա-
տրիայի յաղթանակի և կուլտուրայի ընդհանուր աճեցման: Նախ-
կին դարերում կուլտուրան թափանցում էր ազգաբնակչութեան
մասսաների մէջ մեծ գանդաղութեամբ: Արտադրութեանց փո-
փոխում պայմանները պահանջում են ներկայումս ազգաբնա-
կչութեան մասսաների արագ կուլտուրական գարգացումն, որը
այժմ կատարում է ոչ պատահական բանաւոր աւանդութիւննե-
րով կամ նմանողութեամբ: Ազգաբնակչութեան մասսաների կուլ-
տուրական աճումը կատարում է գաղտնի, մամուլի, գրակա-
նութեան միջոցաւ շափաղանց արագ: Բայց այդ հանապարհի
վերայ լեզուի տարրերութիւնը մասսաների առաջ ահագին դժուար-
ութիւն է առաջ բերում: Օտար լեզուով կուլտուրայի իւրացման
անհրաժեշտութիւնը մի դժբաղդութիւն է: Իսկ շափաղանց գան-
գաղեցնում է մասսաների կուլտուրական աճեցումը, թուլացնում
է նոցա անտեսական պայքարի մէջ և դժուարացնում է նոցա
սոցիալական բարձր խաւերի մէջ մուտ գործելը:

Բայց օտար լեզուով կուլտուրայի իւրացումը ոչ միայն
գանդաղեցնում է նորա մասսաների մէջ թափանցիլը, այլ և նա
համեմատաբար աւելի քիչ գնահատելի հետեւանքներ է տալիս:
Ազգային կուլտուրան, ինչպէս այդ ասուեց վերը, համեմատաբար
կային կուլտուրայի տարրերի վերամշակման արդիւնքն է. դոքա
խանութում են ցեղական կուլտուրայի տարրերի հետ, դոքա յար-
մարում են որոշ ազգութեան պահանջներին, կեանքի արտաքին
պայմաններին: Այս պատճառով էլ ուրիշ ժողովրդի համար այդ
կուլտուրան արդէն ունի աւելի քիչ արժէք, դա օտար է որոշ
ժողովրդի կուլտուրական աւանդութիւններին, դա չի պատաս-
խանում նորա հարցերին, դա չի համապատասխանում նորա պա-
հանջներին: Հին աւանդութիւնների և նոր ձեռք բերածների մէջ
չկայ շաղկապող օղակները:

Նախկին դարերում, երբ շնչին իմրեր իւրացնում էին բարձր
կուլտուրան, նորա այնպիսի արտօնեալ գրութեան մէջ էին գրա-
նում, որ միջոց ունէին օտար լեզուն կատարելապէս իւրացնե-
լու, այդ նպատակի համար նոյն իսկ տիրել մեռած լեզուին:

նոցա քաղաքիկ պայմաններում գտնուելով, դժուար չէր նոցա համար ձուլուել իշխող ազգութեան քարձը դասակարգերի հետ:

Բայց արագ և կանոնաւոր զարգացումը մասսաների, որոնք միջոց չունեն օտար լեզուներ սովորելու համար և չեն գտնուում սերտ յարաբերութեան մէջ իշխող ազգութեան հետ, հնարաւոր է միայն ազգային կուլտուրայի ստեղծելու պայմանով, յարմարեցրած համամարդկային կուլտուրայի ձեին:

Ամեն մի արգելք ազգային կուլտուրայի զարգացման մէջ և փորձ բռնի ձուլելու, ահագին քնաս է բերում ժողովուրդներին: Գերմանական կառավարութեան գերմանացման քաղաքականութիւնը ահագին քնասներ պատճառեց լեհաստանի գերմանական քաժնոււմ: Նոյն աղետարեք հետեանքն ունեցաւ ռուս կառավարութեան ուսացման քաղաքականութիւնը ծայրերկրների կուլտուրական և անասական զարգացման վերայ:

Կազմալուծուածների վերածնումը և նոր ազգութիւնների առաջանալը ոչ միայն զուտ կուլտուրական շարժման բնույթ էին կրում, այլ այդ երևույթները առաջ էին մղում ազգային խնդիրներ նաև քաղաքական կեանքի ասպարիզում: Դեմօկրատիական սկզբունքների յաղթանակը ինքնըստինքեան արդէն հարկադրեց պետութեանը հաշուի առնել ազգութիւնների առանձնայատկութիւնները: Բանի դեռ պետութեան օրգանները իշխելու ղէնք էին ծառայում, նոքա կարող էին հաշուի չառնել ստորադրեալ ազգաբնակչութեան պահանջները: Եթէ այդ ազգաբնակչութիւնը չէր հասկանում պետական օրգանների լեզուն, աւելի վատ, աւելի նա ենթարկւում էր կառավարող փոքրամասնութեան իշխանութեան: Բայց այդպիսի դրութիւնը մեր ժամանակում տանելի չէր կարող լինել: Դեմօկրատիան չէր կարող չպահանջել, որ մասսաները կարողանան յարաբերութիւն ունենալ իշխող օրգանների հետ իւրեանց մայրենի լեզուով. սա անհրաժեշտ հետեանք է ժողովրդապետական սկզբունքի:

Բայց ուրիշ հանգամանքներումն էլ զարգացող ազգութիւնները պէտք է որոշ պահանջ ունենային պետութիւնից: Ազգային կուլտուրայի զարգացման գործը կարիք ունի ոչ միայն առանձին անհատների ազատ ինքնագործութեան, այլ նա պահանջում է մարդկանց կազմակերպուած գործունէութիւն:

Ժամանակակից պետութիւնը իրրև հասարակական կարևոր կազմակերպութիւն, ներկայումս կարևոր դեր է կատարում ժողովրդի կուլտուրայի զարգացման նկատմամբ, նա անմիջապէս կամ տեղական ինքնավարական օրգանների միջոցաւ բանում է ուսումնարաններ, համալսարաններ, գրադարաններ, և այլ նման զարգացուցիչ հիմնարկութիւններ: Նախկին պետութիւնը սովոր-

բարար տարածում էր իւր լուսաւորութեան գործունէութիւնը բացառապէս իշխող ազգի կուլտուրայի հողի վերայ: Նոր ծնունդ առած ազգութիւնները չէին կարող չպահանջել պետութեան կուլտուրական գործունէութեան բնաւորութեան փոփոխութիւն, նորա յարմարեցումը իրենց պահանջներին:

Բայց ազգայնականները կանգ չառան այդ պահանջի վերայ միայն: Ազգային շարժման կատարելութեան համար հրապարակ եկաւ ազգային պետութեան գաղափարը: Ազգային գիտակցութեան միութեանը պէտք է, այդ գաղափարի համաձայն, համապատասխանի ազգային կամքի իրագործող օրգանը — ազգային պետութիւնը: Ազգային կամքը պետութեան միջոցաւ պէտք է դերիշխող դասնայ: Ազգային պետութիւնը այս տեսակէտով կարող է ամենալաւ կերպով զարգացնել ազգային կուլտուրան և արտայայտել նորա ձգտումները միջազգային յարաբերութեանց մէջ: Ազգային հարցի մասին շատ տեսական մտածողներ, անցեալ դարում ազգութեան իրաւունքն էին համարում «սրբազան», «անվիճելի» պետութեան մարմնացումն, ասում է Քլանցկուսը:

Յգրութիւն

Քո նախկին ուսուցիչ,

(Նարունակելի)

